Արձանագրություն 2

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների (ՀՀ Տավուշի բերդի և Սբ. Աստվածածին եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.06.2026թ. ժամը 14:30-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամ՝ Արմինե Ստեփանյան /ԳԱ/
Սուրեն Շաքարյան /ԳԱ/
Աննա Խաչատրյան /ԲԱ/
Վերգինե Սահակյան /ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիլյա Ղասաբյան

1. **Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 **ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-26/43** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. **Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-26/43 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Հասցե, Էլեկտրոնային փոստ, հեռախոսահամար |
|---|---|---|
| 1. | «Արտակ Մարտիրոսյան» ԱՁ | Գեղարքունիքի մարզ, գ. Գեղաքար, 2 փողոց, 4 տուն<br>Artak.martirosyan.2022@inbox.ru, +37494008006 |
| 2. | «ԷՍ ՌԻԲԻԼԴ» ՍՊԸ | Ք. Երևան, Արարատյան փ. 68/30<br>Sahakyanedgar@mail.ru, +37493501150 |
| 3. | «Վահրամ Կնյազյան» ԱՁ | Ք. Արթիկ, Բաղրամյան 1/2<br>systemsvava@gmail.com, +37496101020 |

3. **Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

4. **Մասնակիցների առաջարկած գինը.**

4.1. Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափաբաժին | Գնման գինը ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումը | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 4169672 | «ԷՍ ՌԻԲԻԼԴ» ՍՊԸ | 2300000 | 460000 | 2760000 |
| | | «Վահրամ Կնյազյան» ԱՁ | 2900000 | 0 | 2900000 |
| | | «Արտակ Մարտիրոսյան» ԱՁ | 3100000 | 0 | 3100000 |

**5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

5.1. Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 311 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 09.07.2026թ. ժամը 11:30-ին**

**6 Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1. **«Վահրամ Կնյազյան» ԱՁ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

6.2. **«Արտակ Մարտիրոսյան» ԱՁ** -ի կողմից ներկայացված հայտը կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

6.3. **«ԷՍ ՌԻԲԻԼԴ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

- Բացակայում են Հրավերի I մասի 2.4 կետով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող փաստաթղթերը:
- Բացակայում են Հրավերի I մասի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող փաստաթղթերը:
- Հավելված 2 գնային առաջարկում սխալ է նշված գնման առարկայի անվանումը, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և շտկման ենթակա չէ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

7.1. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

**1-ին տեղ** զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Վահրամ Կնյազյան» ԱՁ**-ին,

**2-րդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Արտակ Մարտիրոսյան» ԱՁ–ին**:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

7.2. Հիմք ընդունելով սույն արձանագրության 6.3. կետը, Հրավերի I մասի 5.2 և 8.2 կետերը՝ **մերժել «ԷՍ ՌԻԲԻԼԴ» ՍՊԸ-ի հայտը ՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**8. Գնահատման արդյունքների մասին.**

8.1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողով՝**

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Արմինե Ստեփանյան

---------- Սուրեն Շաքարյան

---------- Աննա Խաչատրյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Լիլյա Ղասաբյան /քարտուղար/